ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հոկտեմբերի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ Ֆիրուզա Նորայրի Մայիլյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. Ֆ.Ն.Մայիլյանը 2000 թվականի փետրվարի 10-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնում. նախ՝ 10.02.2000 - 31.08.2002՝ դասախոս, 02.09.2002 - 22.12.2005՝ ասիստենտ, իսկ 2005 թվականի դեկտեմբերի 23-ից՝ դոցենտ: Նշվեց նաև, որ Ֆ.Ն.Մայիլյանը 2013 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2017 թվականի հունիսի 19-ը զբաղեցրել է ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը, իսկ 2017 թվականի հունիսի 20-ից տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչն է: Ֆ.Ն.Մայիլյանը վերջին 5 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Ֆ.Ն.Մայիլյանը 1982-1992 թթ. սովորել է Երևանի N 166 միջնակարգ ռուսական դպրոցում: 1992-1997 թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտը ((ԵրԺՏԻ), ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) և նրան շնորհվել է տնտեսագետի որակավորում «Աշխատանքի տնտեսագիտություն և սոցիոլոգիա» մասնագիտությամբ: 1997 թվականին ընդունվել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ((ԵՊՏԻ), ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) ասպիրանտուրա Ը.00.01՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ:

Ֆ.Ն.Մայիլյանը 2002 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2005 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: 2018 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Մարդկային կապիտալի իրացման տեսական հիմնախնդիրները» թեմայով Ը.00.01՝ «Տեսական տնտեսագիտություն» մասնագիտությամբ և ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Նա հրատարակել է 39 գիտական աշխատանք: Դոկտորական ատենախոսություն պաշտպանելուց հետո ունի տվյալ բնագավառում 11 հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ (1 մենագրություն, 1 ուսումնական ձեռնարկ, 9 գիտական հոդված, այդ թվում 5-ը՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում):

Ֆ.Ն.Մայիլյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել և ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատվել է մեկ թեկնածուական ատենախոսություն: Նա սկզբունքային, բանիմաց գիտնական մանկավարժ է, մարդկային բարձր արժանիքներով օժտված անձնավորություն, հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատու և պարտաճանաչ մասնագետ: Նա մշտապես կատարելագործում է իր մասնագիտական գիտելիքները և իր կատարած դրական և արդյունավետ աշխատանքի շնորհիվ վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Տնտեսագիտության տեսության ամբիոնը միաձայն (կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) երաշխավորել են Ֆ.Ն.Մայիլյանին՝ մասնակցելու գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ Ֆիրուզա Նորայրի Մայիլյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկության պահին դահլիճում չէր Մ.Ս.Մելքումյանը):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին և քվեարկությանը մասնակցել են 58-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 57, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ Ֆիրուզա Նորայրի Մայիլյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 3-րդ գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերության պահանջներին՝ **Ֆիրուզա Նորայրի Մայիլյանին** շնորհել **պրոֆեսորի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.01՝ «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. հոկտեմբերի 13
Երևան